

ՏԱՐԵՐՔ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ

պրօֆ. Ռազգէլի

IV

Լ Ե Զ Ո Ւ

«Մարդու ձիրքերը, հանգամանքներն ու պատճառներն այնպէս են դասաւորուել, որ լեզուն ամեն տեղ և առանց բացառութեան միմիայն նրա սեպհականութիւնն է դարձել: Եւ որովհետեւ լեզուն յատուկ է ամեն մարդու, արդ շատնաւով և մարդկութեան արտօնութիւնն է. միմիայն մարդս լեզու ունի: (Հերդեր) Մարդիկ թէև տարբեր աստիճաններով են տիրապետում լեզուին, սակայն այդ տարբերութիւնն էական չէ: Ամեն ազգ կարող է մի ուրիշ ազգի լեզուն սովորել. մենք ամեն օր տեսնում ենք օրինակներ, որ մարդիկ լրակատար կերպով տիրապետում են օտար լեզուներին: Այս բանում քաղաքակիրթ ազգերն անդալման չեն գերազանցում բնական ազգներին. շատ բարձր գիրք ունեցող վաղանդաներ խօսում են կիդ-ու-աւհիլի, ոմանք էլ արաբերէն. բազմաթիւ վանիւմավեղիներ նոյն լեզուն են սովորել: Անգլիայի արեւմտեան եզրերի վաճառաշահ կենդրոններում բուականին թուով նեղբայրներ կան, որ երկու, նոյն իսկ երեք լեզու են խօսում. կանադայի հնդիկների զպրոցներում միաօնարներին զարմանք է պատճառում այն հանգամանքը, որ հնդիկ պատանիները մեծ գիւրութեամբ են սովորում անգլերէն և ֆրանսերէն:

Լեզուի միջոցները, արտիւքն հնչիւնն ու դրա հետ կցուած շարժումները, միմեանց շատ նման են ամբողջ երկրի վրայ և նոյն իսկ լեզուի ներքին կազմութիւններն էլ շատ չեն տարբերում միմեանցից: Կարելի է ասել, որ մարդկային լեզուն մէկն է միայն արմատով, որ խորը տարածուած է մարդու հոգու

մէջ, սակայն բաժանուած է բազմութիւն և շատ տարբեր ճիւղերի ու սասորի: Կան անթիւ լեզուներ, որ ամեն մի աստիճանում տարբերում են միմեանցից. բազմութիւն բարբառներ, քոյր կամ գուար լեզուներ, ինքնաբոյն լեզուաստուծներ փոփոխակի հնչիւններով լցնում են մարզկանց խոհիթներն ու անասաները: Մի քանի ազգեր կարողանում են մատառապէս հասկանալ միմեանց. մի քանի լեզուներ էլ, թէև միմեանց այնքան մօտ չեն, սակայն հարեանցի դիտարկութիւնից թոյայ արդէն նմանութիւն են ցոյց տալիս. միւս կողմից էլ կան լեզուներ, որոնց նմանութիւնն այնքան աննշմարելի է, որ միմիայն գիտութիւնը կարող է որոշել: Եւ վերջապէս կան մեծ քանակութեամբ լեզուներ, որ ըստ երևոյթին բոլորովին տարբեր են միմեանցից՝ ոչ միայն բառերով, այլ նաեւ կազմակերպութեամբ, արտայայտիչ շարաքերութեամբ և նախադասութեան տարրեր կազմութեամբ: Սակայն այս տարբերութիւնները բոլորովին չեն համապատասխանում խոսողների հոգեկան զանազանութիւններին: Զանազան ընդունակութեանց տէր անհատները միեւնոյն բարբառն են գործածում, միւս կողմից էլ միեւնոյն ընդունակութեանց և ուղղութեան տէր անհատները միմեանց չեն հասկանում: Այդ տարբերութիւնները չեն համապատասխանում նաեւ աշխարհադրական զանազանութիւններին և յաճախ չեն համապատասխանում նոյն իսկ ցեղական տարբերութիւններին: Արշաքի հետ. է բուն անդլիացուց անդլիերէն խոսող նեղբար, նոյնչափ էլ հետ. է լեզուով բոլորովին տարբերուող չիւնացին փոքր կղզեաբնակներից: Ազգերի հետազոտութեան տեսակէտից՝ լեզուի նշանակութիւնը բոլորովին այլ տեղ պէտք է որոնել և ոչ թէ լեզուների ազգակցութիւնն ապացոյց համարել նաեւ ազգերի ազգակցութեան: Լեզուն միշտ և գլխաւորապէս պէտք է համարուի մարզկութեան ամեն քննակ քաղաքական գործի կանխապայմանը: Լեզուն կարելի է անուանել մարդու տառաջին և ամենակարեւոր, այն, նոյն իսկ որոշիչ գործիքը: Քաջ ալի էլ նոյնչափ փոփոխական, որչափ մի որ և է այլ գործիք: Մի բառ կարող է դարբեր ընթացքում շատ տարբեր նշանակութիւններ տալնալ, կարող է բոլորովին անբարոյանալ

և զբան կարող է փոխարինել ուրիշ նոր հնարաւած, կամ թէ մի ալլ լեզուից փերցրած բառ: Լեզուն կարելի է գործիքի նման թողնել և նորից ընդունել: Միայն անհատներ չեն, որ մուտնում են իւրեանց մայրենի լեզուն, ինչպէս օրինակ տասնեակու տարեկան հասակում Աստրալիայի բնիկ զարմած Ֆրանսիացի Նարդիգ Պիլլեմպէրը և Ակիա Միանիսը, որ մանկական հասակում իտալիա բերուեց և մի քանի տարուայ ընթացքում բոլորովին մոռացաւ իւր մայրենի լեզուն. ամբողջ ազգեր թողնում են իւրեանց լեզուն և ընդունում են մի ուրիշ լեզու, ինչպէս որ մարդ փոխում է իւր զգեստները: Կան քաղաքակրթութեամբ ձեռք բերուած ուրիշ յատկութիւններ, որոնք լեզուից աւելի յարասե են, օրինակի համար անատնաբուծութեան գիտութիւնը: Քանազան ազգերի կրօնները համեմատելով՝ շարունակ նկատում ենք, որ թէև անունները փոխւում են, տակալն իրը միշտ նայն է մնում. այս ամենալաւ ապացոյց է, որ լեզուն համեմատելով ուրիշ ազգազգական յատկանիշների հետ, ամենից շատ է փոփոխութեան ենթարկւում: Ազգերի կեանքը շանաչողների համար այս ինքն ըստ ինքեան հասկանալի երևոյթի մասին մենք արքան երկար չէինք կանգ առնի, եթէ մինչև արժաւ էլ շարունակ լեզուաբանական դատակարգութիւնները մարդաբանական—ազգագրականի հետ չչփոթէին: ԶԷ որ նոյն իսկ Լեպսիուսի նման մի լեզուագէտ Հեդինսկութիւն կարեւոր է համարել բողոքել այն ըմբռնման դէմ՝ որպէս թէ ազգերն ու լեզուները՝ ծագմամբ և ցեղակցութեամբ համապատասխանում են իրար, ինչպէս որ շատերն ենթադրում են ցայժմ: Հասկանալի է, որ արաբիսի խորագնիւնի հալեցողութեան շնորհիւ՝ ոչ միայն կորցնում են իւրեանց արժէքը, ալլ բոլորովին մերժելի են դառնում: Հնդկակազմանական ցեղ, սեմիտական ցեղ, բանտու ցեղ և ալլն գաղափարները, որովհետև զբանք սխալեցնում են մեզ և որչափ որ անհամեմատ մեծ արժէք և ազգեցութիւն ունեցած լինին լեզուները՝ իբրև մարդկութեան հոգեկան զարգացման առաջին նեցուկներ, այնչափ ևս անհամեմատ ընչին է զբանց նշանակութիւնը՝ մարդկութեան ներքին տարրերութիւններն

ազգացուցանելու համար: Մինչդեռ բաշման վարժների և որսորդ ժողովուրդը խոսում է հարուստ և նորը կազմութիւն ունեցող լեզուով, չինացիները, որ Ասիայի ամենաբարձր և ամենախարատե քաղաքակրթութեան ծաղկեցնողներն են եղել, խոսում են իւրեանց չորսհարիւրչիտուն անփոփոխ միացող արժատական բառերով: Արաբիի հանգամանքներում թէև կարելի է լեզուների մի ճիւղազգրութիւն կազմել, սակայն թող չհաւատացնեն մեզ, որ դրանով մարդկութեանը մի որեւէ օգուտ բերան կլինին, երբ տեսնում ենք, որ բարձր զարգացման տէր ազգերը խօսում են ամենաստոր կազմութիւն ունեցող լեզուով և ընդհակառակը՝ ստորին զարգացումն ունեցող ազգերը խօսում են վսեմ կազմութիւն ունեցող լեզուով:

Լեզուի ընդհանրացումը մի պարզ հետեւանք է այն իրողութեան, որ մարդկութեան բոլոր մասերն այնչափ երկար տեւականութիւն են ունենում, որ կարողանում են իւրեանց լեզուական ընդունակութեանց սաղմերն այն աստիճանի զարգացման հասցնել, որ մենք արտայայտում ենք լեզու զառափառով: Միայն Հէքէյի բալայիսն չէ, որ վաղուց արդէն մոռացութեան է տրուել. նաև նրանք, որ անկատար խօսելով, թոթովելով հետեւեցին գրան, չկան ալլեա: Պակայն ընդհանրացումն արտեղ աւելի հեռուն է հասնում. այժմեան լեզուների մէջ կադժակերպութեան աստիճանների տարբերութիւնները շատ չնչին են: Այս տեսակէտից լեզուն նմանում է որոշ ընդհանրական արուեստների և գործիքների, որոնք բնական ազգերի մօտ աւելի վատ չեն, քան քաղաքակրթ ազգերի. միթէ նոյն կերպ չեն ընդհանրանում կրօնական գաղափարները, արուեստներն ու հասարակ անօթները: Լեզուի հիմքն է հաղորդակցութեան բնական ձգտումը. այդ պատճառով և լեզուն չէ արգասիք անհատական մարդու՝ ինչպէս հասարակութեան, նոյնպէս և պատմութեան մէջ: Հաղորդակցութեան համար և միջոցով ենք մեռք բերում մեր սկզբնական ծանօթութիւնները. հաղորդակցութիւնն է զարգացնում և ճոխացնում լեզուն, նա է ստեղծում լեզուի միութիւնը՝ սահմանափակելով բարբառների փոփոխութեանց բազմանալը: Մենք խօսում ենք, որպէս

զի ուրիշները Հասկանան մեզ. լսում և սովորում ենք, որպէս զի Հասկանանք. մենք խօսում ենք այն, ինչ որ Հասկանալի է ուրիշների Համար և ոչ թէ միայն մեզ Համար: Այս տեսակետից լեզուն ամենապարզ և ամենաընդհանուր կերպով ցոյց է տալիս ընկերական կեանքի՝ անՀատակօնը սահմանափակող ազդեցութիւնը:

Այժմեան բոլոր լեզուները Հին են ըստ ինքեան, կամ թէ ծագում են Հին սերունդներից. բոլորն էլ կրում են պատմական զարգացման Հետքերը, բոլորն էլ շատ Հեռու են սկզբնական ծագումից և դոցա նշանակութիւնը բացատրելու Համար լեզուաբանութիւնն արդէն մի կազմն է ձգել ռվառ-վառւ-ի տեսութիւնը: Լեզուն կենդանի ժարգու շարժուող շրթունքներից արտահոսելով և մօտիկ մնալով Հողուն, որ կեանքի արտայայտութեանց սկզբնակէտն է, կենդանութեան գրօշմն է կրում—յարատե փոխխոսութեանց է ենթարկւում: Թէև նա աւելի երկար կեանք է ունենում, քան այդ լեզուով խօսող սերունդները, բայց այնուամենայնիւ ապրում է նրանց Հետ և փոխխոսութեանց ենթարկւում: Այս փերջապէս լեզուն էլ է մեռնում: Հին եգիպտական լեզուն եգիպտական քաղաքակրթութիւնից աւելի վաղ մեռաւ, Հին յունարէնն աւելի երկար տևողութիւն չունեցաւ, քան յոյների ինքնաբոյն գոյութիւնը. Հռոմի Հետ ընկաւ նաև լատիներէնը: Այստեղ յիշուած երեք լեզուներն անդաւակ չմեռան. գրանք շարունակում են իրենց կեանքը կուպտերէն, նոր յունարէն և բոմանական լեզուների մէջ: Զատ Հազիւ է պատահում, որ լեզուներն անժառանգ մեռնին, ինչպէս օրինակ զօթականը:

Միևնոյն ժամանակ իւրաքանչիւր լեզուի կեանքի ընթացքում տեղի է ունենում անսխեմանաբար մեծացումն և վերանորոգութիւն զանազան ձևերով: Բառերը Հնանում, գործածութիւնից դուրս են ձգւում, կամ թէ չէ ապրում են միմիայն քաՀանանների և բանաստեղծների բերանում: Ազացուցուած է, որ 1611 թուից սկսած անգլիերէն լեզուի մէջ Հնացել են երեք Հարիւր ութսուն և ութը բառ: Դրա վրայ պէտք է աւելացնել նաև արտասանութեան, ուղղագրութեան և մըտ-

քի բազմաթիւ փոփոխութիւնները: Բնական ազգերի մօքերով աղքատ կեանքում յաճախ պատահում է, որ շարունակում են գործածել այնպիսի խօսքեր, որոնց նշանակութիւնը վաղուց արդէն անհասկանալի է դարձել: Այսպէս օրինակի համար՝ կռուի միջոցին մարտի հրաւիրող Ֆիդշին աղաղակում է զէպի իւր հակառակորդը. «Sai tava; sai tava! Ka jau mai ka javia a bure!» («Կարիր, կարիր, տաճարն ընդունում է»): Քայց ոչ ռքի յայտնի չէ այդ խօսքերի միտքը, որ ամենքի կարծիքով շատ հին է: Բայց միւս կողմից՝ թէ ինչպէս նոր իրերի հետ ի միասին նոր բառեր և դարձուածքներ են մտնում լեզուի մէջ, պարզ ցոյց տուեց երկաթուղիների և շօգեկանների դարաշրջանը. այդ միջոցով բոլոր քաղաքակրթութեան ազգերի լեզուները հարկւրաւոր նոր բառերով նոխացան: Ազանգեկները պնդում են, որ շատ խօսքեր, որոնք գործածական էին իրենց նախնիքների ժամանակ, այժմ այլևս չեն գործածւում: Ինչիւն ընդհանրապէս ընդունում է աֆրիկական լեզուների արագ փոփոխումն, իսկ Լեդուառը մեծ արժէք չէ տալիս այդ լեզուների բառարանին և ցոյց է տալիս նրանց նոյն իսկ համաձայնական կանոնների այլքի ընկնող փոփոխութիւնները: Հարկաւ փոփոխութիւններն աւելի մեծ են այն լեզուների մէջ, որոնք զիր չունին, որովհետեւ զիրը, կարելի է ասել, քարացման ազդեցութիւն է ունենում լեզուի վրայ: Եւ եթէ իրաւացի համարենք լեզուաբանների պնդածը՝ թէ լեզուի կեանքը եռում է ոչ թէ գրաւօր լեզուի, այլ բարբառների մէջ, և թէ բարբառների մէջ են ներհում նոր լեզուների կազմութեան սաղմերը, այն ժամանակ կհասկանանք թէ ինչպէս կարելի է վերջապէս լեզուներին վերագրել այն փոփոխական յօրինուածութիւնը, որ յատուկ է բոլորին և կենդանիներին: Մինչդեռ գիրը ձգտում է մի որոշ լեզու հաստատելու, միևնոյն ժամանակ զիր ունեցող ազգերի հաղորդակցութեան նպատակն է՝ մի բարբառի կամ լեզուի տարածութեան շրջանն ընդարձակել: Կարելի է հաստատ ասել, որ զիր չունեցող ազգերը միայն բարբառներով են խօսում, մինչդեռ լեզուն գործ են անում միմիայն զիր ունեցող ազգերը: Սակայն մըն է լե-

գուի և բարբառի մէջ եղած սահմանը: Լեզու ասելով աբսոր-
 Հասկացում է մի բարբառ, որ զրի շնորհիւ Հաստատուն կեր-
 պարանք է ստացել և Հաղորդակցութեան միջոցով՝ ընդարձակ
 ծաւալով տարածուել: Գրականական լեզուն առհասարակ աւելի
 արուեստական, քան թէ բնականն ձևն է խոսակցութեան: Բարբառները թուում են մեզ աւելի ազքատ, աւելի պակաս
 Հաստատուն և կանոնաւորուած, այդ պատճառով և աւելի
 մին չափով ենթակայ փոփոխութեան, նոյն իսկ կամայական-
 նութեան և այդպիսով՝ տարազատ լեզուներ: Բայց այդպէս են
 թուում զրանք մեզ՝ միայն երբ Համեմատում ենք զրանցը զը-
 բաւոր լեզուների հետ: Արդեօք բազմակիզութեան Կոյիտի երեք
 Հարիւր ցեղերից—որոնց Համար Հռովմայեցիները, ըստ Պլի-
 նիոսի, Հարիւր երեսուն թարգման էին գործածում—մըն էր
 լեզու գործածում և մըք բարբառով խօսում: Այդ աստիճանի
 վրայ միայն բարբառներով են խօսում. իրաքանչիւր ցեղ ու-
 Նի իւր յատուկ բարբառը. և եթէ նոր յունարէն լեզուին եօ-
 թանառուն բարբառ է վերադրում, ալիւս այնքան էլ զար-
 մանալի չպէտք է թուան մեզ Կոյիտի բազմաթիւ բարբառ-
 ները: Թէ ի՛նչն է լեզու առաջ բերում և բարբառներ պահ-
 պանում շատ լաւ կերեայ, եթէ Համեմատենք բիրմանական
 լեզուի ընդարձակ ծաւալուիլը Բիրմայի, Պնզուի և Արականի
 խտարնակ, Հաղորդակցութեամբ Հարուստ երկրներում և Վե-
 րին Իրաւադիի Հենց զրանց մերձակայ լեռնոտ երկրներում,
 որտեղ Գործեշ միմիայն Մանիպուրի շրջանում տառնեքիւ բար-
 բառներ յարոնադործեց և որտեղ յաճախ երեսուն կամ քառա-
 տուն ընտանիք խօսում են իրենց յատուկ ու միւս ընտանիք-
 ներին անհասկանալի բարբառով: Այս մաշտաբով պէտք է չա-
 փուին այն տեղեկութիւնները, որ յաճախ փոքր ազգերին վե-
 բաղրում են չափից դուրս շատ լեզուներ: Բաւշմանների խօսած
 բարբառների բազմատեսակութեան և նոյն իսկ միմիայն բլրակ-
 ների շղթայով կամ թէ գետի Հոսանքով միմեանցից բաժանուած
 խմբերի լեզուների տարբերութեան պատճառը Մոֆֆոթը Համա-
 րում է քաղաքակրթութեան այն աստիճանը, որի վրայ գտնե-
 ւում են զրանք. ոչ բնականուր կենդրոն ունին զրանք և ոչ

ընդհանուր շահ, կարճ ասելով՝ դրանք չունին այն միջոցները, որ նպաստում են լեզուի զարծածութեան հաստատուելուն: Հետաքրքրական երևույթ է՝ թէ ինչպէս բնչուան-բուշմաններս-ի լեզուն, (բալալաների, որոնք իբրեւ Պարթա ցեղին պատկանող բնչուանների մէջ են ապրում), շատ փոփոխական և ցեղից-ցեղ տարբեր յատկութիւններ արտայայտող զաւառաբարբառ է, մինչդեռ բնչուանները, դրանց իշխողները, հրապարակալին խորհուրդներում և բանախ նաև խմբական խօսակցութիւնների և երգերի միջոցին մաքուր պաշտպանում են իւրեանց զիշուանան և սերնդէ սերունդ շարունակում:

Սակայն սխալ կլինի՝ եթէ նշանակութիւն չտրուի այն լեզուին, որ միևնոյն ժամանակ պաշտպանողական ոյթ է ներկայացնում, և ընդհակառակն առանց քննութեան ընդունուի շատ հեշտութեամբ փոփոխուող լեզուի մեկը: Զփայնֆարտի շնորհիւ արդէն գիտենք, որ Զուր և Բելլանա ցեղերը՝ չնայելով իրենց տարածական բաժանմանը, համարեն թէ անփոփոխ են պահել շիլլուկ լեզուն: Ի նկատի պէտքէ ունենալ նաև հեռաւոր բանտու բարբառների չնչին տարբերութիւնները: Մենք կարող ենք միայն իբրեւ գիտութեան կողմից սխալ ընդունել, որ վաղըէկը, ինչպէս որ նա գրում էր Եմարգին Պալէնքէ երկրից, 1833 թ. ալիւս չէր կարողանում զգուսել այն բառացուցակից, որ կազմուել էր 1820 թուից թնոյ միայն:

Սակայն այնուամենայնիւ միշտ կարելի է իբրեւ կանոն ընդունել, որ որչափ մեծ է մի ազգ, որչափ սերտ նրա հաղորդակցութիւնը, որչափ հաստատուն է կազմակերպուած նրա հասարակական բաժանմունքը, որչափ սերտ միութիւն են կազմում նրա սոփորութիւններն ու հախճաքները, այնչափ ևս անփոփոխ է նրա լեզուն: Հրապարակական ժողովներում ասած ճառերը, ժողովրդական երգերը, ազգային օրէնքներն ու պատգամախօսութիւնները փոքր չափով նայն ազգացութիւնն են ունենում, ինչ ազգացութիւն որ ունի գիրը: Դրանք որոշ սահման են դնում բարբառների բնական բազմաճիւղ ծաւալմանը և տեւականութիւն են տալիս լեզուի այնպիսի կազմակերպու-

թիւներին, որոնք առանց այդ արտաքին ազդեցութիւնների շատ վաղանցուկ կ'իյնէին:

Այս իրողութիւնները պարզ ցոյց են տալիս՝ թէ մրտեղ պէտք է որոնենք լեզուների զարգացման հշմարիտ և էական տարրերութիւնը: Գարատեաւ անումը բարձրացնում է թէ քաղաքակրթութեան և թէ լեզուի արժէքը: Եյն լեզուն կհասնի զարգացման ամենարարձր աստիճանին, որն ընդունակ է ամեն տեսակ արտայայտութիւնների՝ առանց միտքը մթնացնելու և որը թէ վերացական և թէ իրական զազաւարներն արտայայտում է ամենալիակատար, ամենահասկանալի և ամենակարճ ձևերով: Այստեղից կարելի է հետևեցնել նաև, որ լեզուի և քաղաքակրթութեան զարգացման մէջ զուգակշռութիւն կայ, որովհետեւ «մեթաքս» տառաւրթութիւնը պէտք է և «եդիս» է իշտի «մեմա» տառաւրթութիւնները: Այսին ամենարարձր քաղաքակրթութեանց ներկայացուցիչ ազգերը, առանց լեզուի կազմութեան տարրերութեանը միատեսիլ, կարող են խօսել այնպիսի լեզուներ, որոնք արժանի են զգիւրդանց գործիք է կոչմանը: Գերազանց գործիք ասելով այստեղ լինք հասկանում այնպիսի գործիքներ, որոնք իրենց որոշ նպատակին ամենալաւ կերպով են հասնում, որովհետեւ աւստրալիացիների հասարակ պահանջների համար լիակատար կերպով բաւական են իրենց ազքատ լեզուները: Լեզուները մենք համարում ենք իբրեւ առանձին էյօրինուածութիւններ է իրենց յատուկ զարգացմամբ: Ինչպէս որ մենք մեքենական գործիքների դասակարգում գութանն աւելի բարձր աստիճանի վրայ ենք դնում, քան թէ կացինը—թէև վերջինս հասարակ պահանջներին նոյնչափ բաւարարութիւն է տալիս, որչափ առաջինը մեծ պահանջներին—այդպէս էլ աւելի մեծ նշանակութիւն ունին մեզ համար հնդկազերմանական ցեղի հկուն, պարզ և ճոխ լեզուները, քան թէ բանտա ցեղի ազքատիկ լեզուները:

Թէև մի ազգի լեզուն համարւում է մասշտաբ նրա քաղաքակրթութեան աստիճանի, սակայն միայն զգուշութեամբ պէտք է լեզուի զարգացումից ելրակացնել նաև քաղաքակրթութեան զարգացումը, որովհետեւ շատերի թւում, լեզուն

միայն մի արտայայտութիւն է և ունի իւր բառով կեանքը: Նա մանաւանդ որոշ զաղափարների լեզուական գործածութիւնը չի կարելի իբրեւ այդպիսի մասշտաբ ընդունել: Համարելն ու հաշուելը հարկաւ շատ կարեւոր բաներ են, որոնց զարգացումից կախումն ունի ազգերի հոգեկան և գրանով նոյնպէս քաղաքակրթութեան զարգացման մեծ մասը: Ինչ վերաբերում է այն խնդրին, որ իբրեւ թէ բնական ազգերից շատերն անընդունակ են երեք կամ Հինգ թուից աւելի մտածելու, պէտք է ընդհանրապէս ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վերաբար, որ մի որեւէ գործիքի անբաւարար լինելուց դեռ ևս չի կարելի եզրակացնել, թէ շարժուող մեռքն է ընդունակութիւնից զուրկ: Զարուհակ կրկնում է թէ՛ որովհետեւ այդ ազգերի լեզուներն երեքից աւելի թիւ արտայայտող բառ չունին, ուրեմն և այդ ազգերն երեքից աւելի չեն կարող համարել: Բլէէֆն իրաւամբ նկատում է, որ եթէ այս եզրակացութիւնը հիշտ համարենք այդ զեղբում պէտք է ընդունենք, որ Ֆրանսիացիք անընդունակ են տասից կամ քսանից աւելի համարելու, որովհետեւ գործ են ածում dix-sept կամ quatre-vingt թուերը: Ֆերմանական լեզուն էլ չունի տասը հազար թուի համար առանձին բառ ինչպէս որ ունի Հին յունարէնը. չունենք նոյնպէս հարիւր հազարի (լակ) և տասը միլիոնի (կորո) համար առանձին բառեր, թէև Հնդկական լեզուների մէջ կան այդ զաղափարները: Նուրբացիներն իրենց լեզուի մէջ ունին մինչև քսան թիւը, աւելի մեծ թուերի համար գործ են ածում արարական բառեր, սակայն հարիւրի համար ունին նուիրական չիմիլ: Խոսքը, ճիշտ նոյն հանգամանքն ունին նաև Գոմեր-բոյաշտը Բոնիւրը, շատ բնական ազգեր և հնագոյն դարերի ժողովուրդներ շատ քիչ այդպիսի բառեր ունին և բառերի արտաբանութիւնից անմատարար եզրակացրել են՝ թէ ուրեմն և դրանք գոյների սակաւ զգալութիւններ պէտք է ունենային: Այսուից առաջնորդւում էին այն չափացուցում ենթադրութեամբ, թէ արտայայտութիւնը հշտիւ համապատասխանում է զգալութեանը, այսինքն թէ գոյներ արտայայտող բառերի քանակութիւնը հշտիւ համապատասխանում է այն տարբեր գոյ-

ներքի ատօինանաւորութեանց թուին, որոնք ցանցալին թաղան-
 թի շնորհիւ ի գիտակցութիւն են գալիս: Որչափ որ սխալ է
 այդ ենթադրութիւնը, այնչափ ևս հրահանգիչ է լեզուի իս-
 կական էութիւնն ըմբռնելու համար այն հետազոտութիւնը,
 որ շատ կոշտ կոպիտ բնական ազգեր, արտասովոր մեծ քանա-
 կութեամբ գոյներ արտաբարձող բառեր ունեն: Այդպիսի թէ՛ ճո-
 խութիւնը և թէ՛ աղքատութիւնը ծագում են տհասութիւ-
 նից: Ինչպէս որ լանախ միեւնոյն անունը գործ է գրւում զա-
 նազան գոյներէ համար, նոյնպէս և ամենատարբեր անունները
 գործ են ածւում միեւնոյն գոյնի համար: Այս ուրեմն խառնա-
 շփոթութեան ճոխութիւն է և. ոչ թէ բարձրագոյն զարգաց-
 ման նշան: Այս արտասովոր ճոխութեան առաջացման եղանա-
 կի վրայ լոյս է տեսւում այն իրազութիւնը, որ այն աֆրիկացի
 նեգրոսները, որոնք, ինչպէս հերերոսները և գիսկանները, սիրով
 են անանաբուսութեամբ պարապում, իրենց հօտերի համար
 խիստ մեծ քանակութեամբ բառեր ունին՝ թուի, գեղման,
 սպիտակ, խալտարդէտ աւալն գոյներէ համար: Հերերոս իոգնի
 դէմ բան չէ համարում՝ մարգալետնի և երկնքի գոյնը միե-
 նոյն բառով արտաբարձելու, սակայն նա հազիկան անընդունա-
 կութեան մեծ ազացոյց կհամարէր այն հանգամանքը, եթէ որ
 մէկը տարբեր կալիքի թուի գոյնի գանազան ատօինանաւորու-
 թիւնները մէկ բառի մէջ ամփոփէր: Հետազոտած է, որ սա-
 մաններն իրենց արազքենթաց եղբիւրների զորշ և թուի գոյ-
 ների ատօինանաւորութիւնները տարբերելու համար տասն և
 մէկ տասն և երկու բառ ունին: Նոյնպիսի բարձր զարգացման
 է հասել մալալեան և աբիսինեական կղզիների բնակչաց նաւա-
 կան բառագիտութիւնը: Սակայն միւս կողմից տեղի ունին և
 դրա հակառակ երևոյթներ. ոչ թէ միայն բնական ազգերն են
 տարբեր գոյների համար մի բառ գործածում, այլ նոյն իսկ
 բարձր զարգացման տէր ազգերի լեզուների մէջ ևս նկատելի է
 այդ թերութիւնը. գերմանական գեղջուկը լանախ մանուշա-
 կագոյնն ըմբռնում է թուիի տեղ, իսկ շապոնացին կապոյտը՝
 կանաչի տեղ:

Գրեմս Ժ. Կամպարայոս այս բովանդակութեամբ անգլիական լեզուի մասին իր արձակ մտորումները լայնաց լայն քննարկում:

կարիքն է որոշում լեզուի հաղթությունը: Եւրոպայի արժեքն ամենաքաղաքակրթուան ազգերի համար իբրեւ կանոն ընդունում է, որ միջին զարգացման տէր անհատներն իրենց լեզուի բառարանի միայն շատ քիչ մասն են խնայելու գործածում: Անգլիական լեզուն մոտ հարիւր հազար բառ ունի, սակայն անգլիացի երկրագործն ըստ սովորականին բառականում է երեք հարիւր բառով: Ուր որ բարձր քաղաքակրթութեան տէր ազգերը շփում են քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ եղող ազգերի հետ, վերջիններիս լեզուն գիւրութեամբ աղքատանում է, որովհետեւ ահագին քանակութեամբ բառեր է փոխառնում առաջիններից: Սակայն այդ զեւջում լեզուի աղքատանալուց զեռ ևս չի կարելի եղբակացնել նաեւ քաղաքակրթութեան աստիճանի անկումը: Իբրեւ օրինակ կարելի է առաջ բերել բազմաթիւ արաբական բառերով բարդուած նուբիական լեզուն: Արեւի, յուսնի և ստղերի համար նուբիացիներն առանձին բառեր ունեն, սակայն ժամանակ որոշող զազափարները՝ տարի, ամիս, օր, ժամ՝ փոխ են առել արաբական լեզուից. ջուր, ծով և զեռ զազափարները նրանք արտաբարում են միմիայն էռի բառով, սակայն նեղոսը կոչւում է Տօսի: Տեղական բոլոր ընտանի և վայրերի կենդանիների համար նրանք ունին սեղհական բառեր, իսկ տների և նաւերի շինութեան վերաբերեալ բոլոր բառերն արաբերէն են: Աստուած, Հոգի, ստրուկ, ազգակցութիւն ցոյց տալող զազափարները, մարմնի մասերը, զէնքերը, զաշտային պտուղները և ինչ որ վերաբերում է հայ պատրաստելուն—բոլորն արտաբարում են նուբիական առանձնեքով. իսկ ընդհակառակը՝ ծառայ, բարեկամ, թշնամի, տաճար, ազօթել, հաւատալ, կարգալ բառերն արաբերէն են: Բոլոր մետաղներն արաբական առանձններ են կրում, բացի երկաթից: Վերանք հարուստ են բերբեր. լեզուով, աղքատ են արաբերէնով:

Թէ լիւր խառնուրդն որ աստիճանի հարստացնում են լեզուներն և նպատակաբարմար դարձնում՝ եւրոպական լեզուների մէջ ամենից լաւ ազդեցուցանում է անգլիերէնը, որի մէջ համարեալ թէ նոյն չափով գերմանական ծագումն ունեցող

բառեր կան, որչափ բովանդական։ Վատահամբաւ օտար բա-
ռերից շատերն այնուամենայնիւ անհրաժեշտ են։ Յիշենք մի-
այն թէ հրապիտ լաւելումների պէտք ունեցան աֆրիկական,
ասորական և ամերիկական լեզուները, որպէս զի միոյն-
նորները կարող լինէին Սուրբ Գրքի նոյն իսկ հասարակ պատ-
մութիւնները և քրիստոնէական հաւատի հիմնական գրութեան-
ները թարգմանել։ Իւրաքանչիւր քարոզութեան շրջանում մի-
միայն ըստուած զարգափարի թարգմանութիւնն ունի իւր զը-
ժուար և սխալներով հարուստ պատմութիւնը։

Մենք զանց ենք առնում այն ծանր նեղութիւնները, որ
կրում են բնութիւնից լեզուազուրկները, համբները, լիշեցնում
ենք միայն այն հետաքրքրական իրողութիւնը, որ կազէմբէ-
սի պետութեան մէջ Լիւինգստենը գտաւ մի խուլ ու համր,
որ ճիշտ նոյն նշաններով էր խօսում, ինչ նշաններ որ գործ
են ածում եւրոպացեակ անկիրթ խուլ ու համրերը։ Ինքն ըստ
ինքեան հասկանալի է, որ նշաններով և գիւնգներով խօսելն այն-
քան տակի գործածական է դառնում, որչափ աղքատ ու պարզ
է իսկական լեզուն, որչափ տակի քիչ բազմազան ու վերացա-
կան են այն զազափարները, որոնք պէտք է արտայայտուին։
Յանախակի գործածման շնորհիւ այս տեսակ լեզուն էլ կարող
է այնպիսի կատարելագործութեան հասնել, որ մենք չենք էլ
կարող երևակայել՝ չնայելով որ հազարաւոր բառեր ունինք
պատրաստի։ Փաղաքակրթութեամբ աղքատ ազգերն ամենա-
հասարակ նշաններով ու գիմագծերով տակի շատ բան են հա-
կանում, քան թէ մենք։ Խորամանկ և միևնոյն ժամանակ
լռակեաց Հնդկիների մէջ գաղապացի է նշանացի խօսակցութիւ-
նը և իսկական բազմաշանների սխալմիջոց վերածուել։ Մալ-
լէրին իւր՝ Հնդկիների նշանացի և գիմագծերով խօսելու մա-
սին գրած մեծ աշխատութեան մէջ առաջ է բերում մի շարք
գլխաւոր նշաններ, որոնց բարդութիւններից կազմում են բազ-
մատեսակ նախադասութիւններ ու ժողեր։ Սրանց թւում կա-
րելի է գտնել նաև հրդեհի և ծուխի ազդանշանները, Գոմե-
բալի սրնգի լեզուն, որով հայիւնները միմեանց հետ զրուցա-
րում են հեռաւոր տարածութիւններից, պատուէրներ են տա-

լիս միմեանց և այլն: Ամերիկայի հնդիկները լաճախ մի ձեռքի վրայ զաջած կրում են մի լիակատար մասշտաբ՝ զանազան տատարածամեծներով: Սրանք արդէն զրի սկզբնական նշաններն են:

Երկրիս բոլոր ազգերն ունին՝ զազափաբները տեսանելի զարմեկու հասարակ միջոց. այդ պարզ միջոցն է Գոփերփերը կամ Կոմփերը: Այդ երկուսն էլ յայտնի են բոլոր ազգերի մասնակներին: Մեր տղայքն էլ են զարն ածում պատկերազիր՝ մինչդեռ նրանք իրենց չսիրած ընկերոջ տան դասն վրայ իշի գլուխ են նկարում: Սակայն չափազանքները, որոնք անտեղեակ են զրի աւելի բարձր տեսակին, կարողանում են միմեանց մասշտաբած պատկերներով աւելի արտայայտել՝ քան առանձին զազափաբները: Երբ այս պատկերներն ընդհանուր համաձայնութեամբ զաշնագրական բնաւորութիւն տաճարով՝ աւելի ընդարձակ շրջաններին հասկանալի են լինում, գառնում են պատկերազիր: Սակայն այդ նշանները կարող են միայն համաձայնութեամբ որոշուած մի նպատակի նառախի, ինչպէս օրինակ սեպհականութեան նշանները կարող են միայն արտայայտել այն իրողութիւնը, որ այն առարկան, որ նրկարուած կամ փորագրուած է, պատկանում է մի օրոշ մարդու: Զատ նշաններ, որ զրուաղի բնաւորութիւն տաճարով՝ մտննում են տրուետին և հազիւ են հանաչում, կարող են առաջացած լինել այդպիսի սեպհականութիւն ցոյց տուող նշաններէց կամ թէ նպատակ ունին մի օրեւ զազափաբ մեկնել, ինչպէս օրինակ մի որոշ օղղութեամբ զնացող տաքը կամ նշան ցոյց տուող ձեռքը՝ հանապարհ են ցոյց տալիս: Այդ նշաններն արդէն այն սահմանի վրայ են, որտեղից հասնում են աւելի բարձր զարգացման աստիճանին: Դրի բոլոր բարձր տեսակներն առաջացել են պատկերազրից: Դրի այդպիսի նազումը այսօր ևս նկատելի է Մեքսիկայի և Եգիպտոսի մեհնազրերի մէջ, բայց չինական զրի մէջ աննշմարելի է զարմել: Սակայն զրա հետքերն ամեն տեղ կարելի է գտնել: Դայն իսկ բեհտագրերի մէջ նկատում են այն պատկերազրերի հետքերը, որից առաջացել են: Եգիպտական մեհնազրերի մէջ նկարուած եղբ

կամ առաջը ցոյց է տալիս առարկան, բայց նոյնպէս և որոշ հնչիւններ: այս հնչիւններ արտայայտող նկարները գոյութիւն ունին նոյն իսկ ամենաՀին, Քրիստոսից երեք Հազար տարի առաջ գրուած արձանագրութիւնների մէջ: Մեքսիկացի պատկերազարդի մէջ նոյնպէս խառը նկարուած են իր և հնչիւն արտայայտող նշաններ: Չինացիների միաժանկանի լեզուն, որ միւսնայն վանկով տարբեր բառեր է արտայայտում, Հարկաւ գործ է ածում Հազիւ նշմարելի՝ իր ցոյց տուող նշաններ, որպէս զի որոշէ ձայնական վանկանիշը: Ընդհակառակը ջապոնացիք՝ իրենց բազմավանկ և ձայնական գրութեան աւելի բարձար լեզուի Համար՝ չինական տառերից կազմեցին մի իսկական ձայնական զիր: Նոյնն աւելի Հաստատուն կերպով աշին փիւնիկեցիները՝ եղիպտական պատկերազարդից դուրս թողնելով աւելորդ իր ցոյց տուող նշանները և ընդառնելով միմիայն Հընչիւններ գրելու Համար կարեւոր մեհնագրերը: Փիւնիկեցիների տառերի անունները վերցրին յոյները և ապա կազմեցին արեւմտեան երկրների բոլոր լատինականները: Այսպէսով պատկերազարդի բազմատեսակ սկզբնաղբութիւններից առաջացաւ տառազիրը՝ երկրի միայն մի վալլում. և այս զիրն եղաւ մարդկային մտածողութեան ամենանշանաւոր գործիքներից մէկը, ամենանկունը, բոլոր լեզուներին բարձարուող, հեռագրի և սրժազրութեան գործածման միջոցին ամենահամառատագրութեան Հասնող տառազիրը: Տառազրի գիւտի շնորհիւ մարդկութեան զարգացման ընթացքը մի արտաքոյ կարգի նշանաւոր քաջ արտ. որովհետեւ զիրը Հաստատելով և ազաւտելով աւանդութիւնը, Հաստատեց և ազաւտեցրեց նոյն իսկ քաղաքակրթութիւնը, որի հովիտն մէջ զանում ենք իբրեւ կենդանի, կարելի է ասել, Հոգեւոր միջուկ՝ աւանդութեան վերայ Հիմնուած սերունդների կապակցութիւնը:

Որպէս ուրեմն՝ այն լեզուները միայն կՀասնեն, զարգացման ամենաբարձր աստիճանին, որոնք ընդունակ են մտքերն արտայայտել պարզ, կարճ և Հասկանալի ձևերով:

Ամենաբարձր քաղաքակրթութեան Համար անհրաժեշտ է

